ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«06» «08» 2018թ.**
ժ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,
Վալեր Հոդաբաշլան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով՝ և հիմք ընդունելով <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի, Եղիսաբեթ Ալմազյան ԱՁ-ի, <<Սենդա>> ՍՊԸ-ի, <<ՌԱՋ ՇԻՆ>> ՍՊԸ-ի և <<ՄՈՐՄ>> ՍՊԸ-ների՝ վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ տրամադրած հայտարարությունը /եզրակացությունը/ և հրավերով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը՝

- 1-ին, 2-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով՝ ընտրված մասնակից ճանաչել <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ին:
- 5-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով՝ ընտրված մասնակից ճանաչել Եղիսաբեթ Ալմազյան ԱՁ-ին:
- 6-րդ, 7-րդ և 14-րդ 15-րդ չափաբաժիններով՝ ընտրված մասնակից ճանաչել <<ՌԱՋ ՇԻՆ>> ՍՊԸ-ին:
- 4-րդ չափաբաժնով՝ ընտրված մասնակից ճանաչել <<Սենդա>> ՍՊԸ-ին:
- 3-րդ և 13-րդ չափաբաժնով՝ ընտրված մասնակից ճանաչել <<ՄՈՐՄ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի բոլոր չափաբաժիններին հայտ են ներկայացրել մեկից ավելի մասնակիցներ, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 11.08.2018թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան